և Աջարիայի ղեկավարության համատեղ ծրագրով տեղի վետերաններին, այդ թվում՝ հայ, բաժանվեց օգնություն:

ԹԲԻԼԻՍԻՈՒՄ ՆՇՎԵՑ ՍԱՅԱԹՆՈՎՅԱՆ ՎԱՐԴԱՏՈՆԸ

Մայիսի 27-ին Թբիլիսիի առաջնորդանիստ Սուրբ Գևորգ եկեղեցու բակում, ուր արդեն 212 տարի հանգչում է Սայաթ-Նովան, տեղի ունեցավ ավանդական Վարդատոնը: Տոնախմբությանը նախորդեց թեմի առաջնորդ Տ. Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանի ձեռամբ Հոգեգալստյան տոնի առիթով մատուցված Սուրբ Պատարագը, հընթացս որի առաջնորդ Սրբազան Հայրը օրվա խորհրդի առիթով հավուր պատշաճի քարոզ խոսեց և շնորհավորեց հարյուրավոր ներկաներին Վարդատոնի կապակցությամբ:

Ահա արդեն 93-րդ անգամ տոնվող Վարդատոնի հիմքը դրվել է 1913-ի աշնանը Հովհաննես Թումանյանի, Գևորգ Բաշինջաղյանի, Իոսեբ Գրիշաշվիլու և Իոսեբ Իմեդաշվիլու նախաձեռնությամբ: Վարդատոնը նշվում է յուրաքանչյուր տարի մայիսի վերջին կիրակի օրը: Մայիսին, որովհետև մայիսը՝ վարդաբույր ամիս է, վարդերը՝ սիրո և գեղեցկության խորհրդանիշ... այն, ինչ իր երգերում քարոզում էր մեծ բանաստեղծը: Ու քարոզում հայերեն, վրացերեն, ադրբեջաներեն և պարսկերեն լեզուներով միաժամանակ: Շնորհիվ իր մարդասեր ու սրտաբորբ քնարի՝ Սայաթ-Նովան դարձավ ոչ միայն հայ, այլև անդրկովկասյան երեք ժողովուրդների սիրերգակը:

Թիֆլիսը զարդարող ու նրանում ապրող ժողովուրդներին բարու թելերով կապող Վարդատոնի 93-րդ էջն իր բովանդակային հագեցվածությամբ նշվեց առավել քան մեծ շուքով: Մայիսյան վարդաբույր օրը կազմակերպվել էր Վիրահայոց թեմի մշակույթի բաժնի, Թբիլիսիի Պ. Ադամյանի անվան պետական հայկական դրամատիկական թատրոնի, Վրաստանի հայերի միության ջանքերով:

Վարդատոնի հանդիսավոր մասը բացեց և հիանալի վարեց Վրաստանի հայ գրողների «Վերնատուն» միության նախագահ, բանաստեղծ Գևորգ Մնիչյանը: Նա հատկապես արժեվորեց 93-ամյա ալեհեր Վարդատոնի տարեցտարի երիտասարդացող ոգին, թարմությունն ու շունչը: Օրհնության իր խոսքում թեմի առաջնորդ Տ. Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանը կոչեց ընթանալ Սայաթ-Նովայի հետքերով, տիրապետել մի քանի լեզուների, որոնցից առաջնայինը համարել մայրենին, հաճախել հայկական դպրոց:

Հայ-վրացական դարավոր բարեկամությունը փաստող գեղեցիկ օրինակներով համեմվեց և վրաց հանրաճանաչ գրող, Վարդատոնի պատմության ամենամյա այցելուի՝ Կոնստանտինե Գամսախուրդիայի թոռան՝ Կոկա Գամսախուրդիայի ելույթը: Հայ ու վրաց ժողովուրդների ապագան միասնաբար ու սայաթնովյան սիրով կառուցելու հորդոր ուղղեցին Հայաստանի Հանրապետության վարչապետի խորհրդական Ստեփան Մարգարյանը, Վրաստանի հայերի միության նախագահ Հենրիխ Մուրադյանը, Վրաստանի հոգևոր ճեմարանի պրոռեկտոր Սերգո Վարդոսանիձեն, Վրաստանի Մարդու իրավունքների պաշտպան Սոզար Սուբարին, Վրաստանի գրողների միության նախագահ Մաղվալա Գոնաշվիլին, արձակագիր Ռևազ Միշվելաձեն:

Ներկաները ջերմությամբ ու երախտագիտությամբ ընդունեցին բազմավաստակ թարգմանիչ-բանաստեղծներ, Վրաստանի գրողների միության անդամներ Գիվի Շահնազարի, Անահիտ Բոստանջյանի, սայաթնովագետ Զեզվա Մեդուլաշվիլու, Հայաստանի գրողների միության անդամներ, բանաստեղծներ Ռուզաննա Ասատրյանի

և Գագիկ Դավթյանի ելույթներն ու ասմունքը ինչպես սեփական, այնպես էլ Սայաթ-Նովայի ժողովածուներից:

Վարդատոնի մասնակիցներին հղվել էին նաև շնորհավորական նամակներ. Վրաստանում Հայաստանի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Հրաչ Սիլվանյանի ուղերձն ընթերցեց և ներկաներին շնորհավորեց դեսպանության խորհրդական Եղիա Մայսուրյանը: Ընթերցվեց նաև Հայաստանի «Վահան Տերյան» մշակութային կենտրոնի (նախագահ՝ Առուշան Հակոբյան) անդամների շնորհավորական նամակը:

Ինչպես միշտ տոնախմբության հանդիսավոր մասին հաջորդեց գեղարվեստական մասը, որը վարում էին Առաջնորդարանի մշակույթի բաժնի ղեկավար Լևոն Չիդիլյանը և վիրահայոց թատրոնի տաղանդավոր դերասանուհի Նանո Պողոսյանը: Այս տարի այն բացվեց Հայաստանի ժողովրդական արտիստուհի, Երևանի Գ. Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոնի դերասանուհի Ժենյա Ավետիսյանի կողմից: Նվագակցությամբ Հայաստանի «Դուդուկներ» կվինտետի (գեղարվեստական ղեկավար և հիմնադիր՝ Գիորգի Մինասով), դերասանուհին հայերեն ու վրացերեն կարդաց սայաթնովյան «Թամամ աշխարհը», «Դուն էն գլխենը», «Աշխարհումս ախ չիմ քաշին»:

Ցնծությամբ ընդունվեցին և հայաստանյան պատվիրակության (ղեկավար՝ Երևանի պետական ֆիլհարմոնիայի տնօրեն Գագիկ Մանասյան) և մյուս անդամների՝ Հայաստանի «Նազանի» ժողովրդական գուսանական երգերի համույթի՝ հանձին գեղարվեստական ղեկավար, միջազգային մրցույթների դափնեկիր, ժողովրդագուսանական երգերի վարպետ կատարող Արուս Գուլանյանի, նաև՝ արցախցի երգիչ Սարիբեկ Սարգսյանի կատարումները:

Անշուշտ, կովկասյան մեղեդիների հնչեղությամբ այդ արևշատ օրն առավել գեղեցկացրին ու նրան Հին Թիֆլիսի կոլորիտը հաղորդեցին «Դուդուկներ» կվինտետը, Թբիլիսիի «Արևելյան աստղ» երգի (գեղ. ղեկ.՝ Վանիկո Դարաշվիլի) և մասնավորապես Վարդատոնի տոնակատարությանը արդեն 65 տարի հանդես եկող Թբիլիսիի ժողովրդական երգի և գործիքների համույթները (գեղ. ղեկ.՝ Մուկուչ Ղազարյան):

... Սայաթնովյան Վարդատոնը սկզբնավորումից ի վեր առաքելություն ունի համախմբելու, միավորելու, սեր ու խաղաղություն սերմանելու: Եվ դա ոչ միայն բանիվ, այլև՝ գործով: Տարիներ շարունակ այն տոնվել է Սուրբ Գևորգ հայոց եկեղեցու հանդիպակաց հրապարակում՝ Մեյդանում, որ համարվում է սիրտը Թիֆլիսի և որն, իր տարածքի առումով, հնարավորություն է ընձեռել առավել հոծ ու թիֆլիսյան բազմազգ հանրության ներկայության ու բեմական մասնակցության: Հույս ունենք, որ հաջորդ տարի տոնը կհամախմբի բոլորիս հենց այստեղ, և Սայաթ-Նովան իր հրաշք խոսք ու խրատով, քամանչայի ջավահիր քարով ու սադափ նախշով, հազար ռանգով ու հազար հանգով կզուգի-կզարդարի օրը ողջ Թիֆլիսի:

ՎԻՐԱՀԱՅՈՑ ԹԵՄԻ ՄԱՄԼՈ ԴԻՎԱՆ